ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 22-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Արտակարգ աշխուժություն է տիրում մայրավանքի շրջափակում. դեռևս վաղ առավոտից հավատացյալների խուռներամ բազմությունը փութացել էր ներկա գտնվելու առավոտյան ժամերգությանը:

Օրը սովորականից պայծառ էր և արևոտ: Ամենուրեք խինդ և ուրախություն:

Ժամը 11-ին զվարթորեն ղողանջում են Մայր տաճարի զանգերը, և սկսվում է ս. պատարագի արարողությունը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով և սփյուռքահայ ուխտավորներով, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Զատկական ս. պատարագը մատուցում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագի արարողությունը մեծ ոգեվորությամբ կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Խորեն Մեյխանեջյանի:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա սուրբ խորհրդի համապատասխան, Վեհափառ Հայրապետը բովանդակալից քարոզ է խոսում, որը հաջորդ օրը, ապրիլի 23-ին, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Ս. պատարագի արարողությանը ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Ս. պատարագին ներկա են լինում նաև ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած ֆրանսահայերի դիմադրական շարժման մասնակից հայ վետերանների խումբը, Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Գևորգ Պագրճյանը, տեր և տիկին Կարպիս Զրբաշյանը՝ Փարիզից, լիբանանահայեր, կանադահայեր, որոնցից շատերը ստանում են սուրբ հաղորդություն:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան՝ ճանապարհին օրհնելով հավատացյալների բազմությանը:

Վեհարանում Վեհափառ Հայրապետը ողջունում է ներկայությունը սփյուռքահայերի և մանավանդ Փարիզից ժամանած դիմադրական շարժման խմբի ներկայացուցիչների, ոգեկոչում հիշատակը Ապրիլյան եղեռնի մեր նահատակների և Սարդարապատի ճակատամարտի զոհված հայ հերոսների՝ շեշտելով, որ Սովետական Մայր Հայաստանում հայ ժողովուրդը կարողացավ իր նահատակությունը վերածել հաղթանակի և ազգային վերածնության:

Բոլոր ներկաները հերթով համբուրում են Վեհափառ Հայրապետի ս. Աջը և ստանում Նրա օրհնությունները:

Օրվա հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով;

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ